ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ

ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Ք. Գավառ ***14.04. 2016 թ. ժամը 11.00***

Նախագահում էր մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը, մասնակցում էին մարզի խորհրդի 92 անդամներից 79-ը:

Մասնակցում էին մարզպետի տեղակալներ Անդրանիկ Հակոբյանը, Կարեն Հակոբյանը, Արտաշես Նիկոյանը, մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Սևակ Խլղաթյանը, մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետերը, բաժինների վարիչները, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության աշխատակազմի տարածքային կառավարման և զարգացման վարչության վարչական վերահսկողության բաժնի առաջատար մասնագետ Արմեն Մարտիրոսյանը և մամուլի ներկայացուցիչներ:

Օրակարգում՝

1. 2016 թվականի ապրիլի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման արդյունքների մասին:
   /Զեկ. Յուրա Մուշեղյան - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ/

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում 2016 թվականի գարնան գյուղատնտեսական նախապատրաստական աշխատանքների մասին:
   /Զեկ. Համբարձում Համբարձումյան - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ/

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում 2016 թվականի առաջին եռամսյակում իրականացված վարչական հսկողության արդյունքների մասին:
   /Զեկ. Իվան Ասատրյան - մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ/

4. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների մասին:
   /Զեկ. Դերենիկ Հովհաննիսյան - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ/

5. Այլ հարցեր:

Հայտարարություններով հանդես եկավ՝

Յուրա Մուշեղյանը - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ

Իվան Ասատրյան - մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ

Մարզի խորհրդի աշխատանքներն ամփոփեց մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը:

1. Առաջարկվեց մարզի համայնքների ղեկավարներին՝

1) ամենօրյա աշխատանք տանել համայնքների 2016 թվականի բյուջեների սեփական եկամուտների /հողի հարկ, գույքահարկ, տեղական տուրքեր, հողի և գույքի վարձակալությունից եկամուտներ/ հավաքագրման ու աշխատավարձերի գծով կուտակված պարտքերը մարելու ուղղությամբ և ապահովել սեփական եկամուտների համամասնություններով պահանջվող ցուցանիշները.

2) ՀՀ կառավարության որոշմամբ 2016 թվականին գյուղացիական տնտեսություններին մատչելի գներով տրամադրված պարարտանյութի լրացուցիչ չափաքանակի անհրաժեշտության դեպքում հայտերը ներկայացնել մարզպետին.

3) աշխատանքներ տանել ՀՀ կառավարության որոշմամբ 2016 թվականին գյուղացիական տնտեսություններին մատչելի գներով տրամադրված սերմացուների գումարների հավաքագրման ուղղությամբ.

4) գարնան գյուղատնտեսական աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ օգնություն ցուցաբերել համայնքների սոցիալապես անապահով ընտանիքներին.

5) ուշադրության կենտրոնում պահել ՀՀ սահմաններին և Պաշտպանության բանակում ծառայող ժամկետային և պայմանագրային զինծառայողների ընտանիքները՝ օգնություն ցուցաբերել նրանց գարնան գյուղատնտեսական աշխատանքները կատարելու համար և աջակցել այդ ընտանիքներին՝ առկա խնդիրները լուծելու համար:

Առանձնահատուկ ուշադրություն դարձնել զոհված զինծառայողների ընտանիքներին՝ լուծել նրանց սոցիալական խնդիրները, իսկ անհրաժեշտության դեպքում դիմել ՀՀ Գեղարքունիքի մարզպետին.

6) աշխատանքներ տանել համայնքապետարաններում իրականացված վարչական հսկողության արդյունքում հայտնաբերված թերությունները և բացթողումները վերացնելու ուղղությամբ.

7) ուշադրության կենտրոնում պահել և սահմանված ժամկետներում իրականացնել ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2016 թվականի ապրիլի 13-ի <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում աղբահանության, սանիտարական մաքրման, ծառատնկման, ներհամայնքային փողոցների բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ կազմակերպելու մասին>> N 305 – Ա որոշման պահանջները:

ՄԱՐԶՊԵՏ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ